# Ջ Ր Ա Յ Ի Ն  Կ Ո Մ Ի Տ Ե

## Հ Ր Ա Մ Ա Ն

17 ապրիլի 2019 թվականի N 41 - Ա

### ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 101-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդված 1-ին մասով և հիմք ընդունելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը, և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Ստեղծել ներքին աուդիտի կոմիտե հետևյալ կազմով՝

   Վ. Մելքոնյան – Կոմիտեի նախագահ (ներքին աուդիտի կոմիտեի նախագահ),

   Հ. Գուլյան – Կոմիտեի նախագահի տեղակալ,

   Ա. Մեսրոպյան – Կոմիտեի նախագահի տեղակալ,

Ս. Ասրյան – Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի ներքին աուդիտի բաժնի պետ (ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի նախագահի 2018 թվականի օգոստոսի 8-ի <<Ներքին աուդիտի կոմիտե ստեղծելու և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի օգոստոսի 31-ի N 139-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 101-Ա հրամանը:
3. Սույն հրամանի հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐԴԱՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019թ. ապրիլ 17

Երևան